


ՀՀ-ը իր հաստիքի շնորհակալությունն է հայտնում Հայկական բարեգործական ընդհանուր միությանը (ՀԲԸՄ), որն անընդմեջ
 երկամսյակով է համագործակցում իր հիմնադրումից ի վեր: Բացի ՀԲԸՄ-ից մեծ աջակցություն են ցուցաբերել ԱՄՆ Միջազգային
 զարգացման գործակալությունը՝ ինչպես նաև Լինսի հիմնադրամը: Համագործակցությունը կրանքի կոչվեց Հայաստանի կառավարության
 անմիջական աջակցությամբ, որը ողջունեց ՀՀ-ի մտադրը՝ Հայաստանի կրթական համակարգը: ՀՀ կառավարության կողմից
 սրանադրվեցին շենքային և նյութատեխնիկական պայմաններ: Կալիֆորնիայի համալսարանը ՀՀ-ին ցուցաբերեց ուսում-
 նական և կազմակերպական օժանդակություն: ՀՀ-ի անձնակազմը իր խորին շնորհակալությունն ու երախտիքն է հայտնում այն
 բոլոր անհատ երկամսյակներին և կազմակերպություններին, որոնք տարիներ շարունակ աջակցել են համալսարանի առաջ-
 ընթացին: Ընդհանուր նպատակադրման, սրանադրած ժամանակի ու միջոցների՝ հնարավոր դարձավ համալսարանի
 շարունակական գործունեությունը և ընդլայնումը:

378.155
 ՀԱՅ



Արաւան գետի կիճը
Սյունիքի մարզ

Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը իրականացնում է կրթական ծրագրեր, երեսօրհանություններ և ծառայություններ, որոնք ուսանողին պատրաստում են գործելու ի նպաստ Հայաստանի և տարածաշրջանի շարունակական զարգացման այնպիսի միջավայրում, որն արժեքում է ակադեմիական գերազանցությունը և բազմաբնույթ ազատ հարցապնդումը, գիտականությունը, ստաճնորդումը և հասարակությանը ծառայելը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 29 հունիսի 2004թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադիրներին, ղեկավարներին, դասախոսներին, ուսանողներին և շրջանավարտներին՝ համալսարանի հիմնադրման 10-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրումը օրինակալից է համընկավ Հայաստանի անկախության վերականգնմանը: Խորհրդանշական է, որ համալսարանն իր 10-ամյա հոբելյանը նշում է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 10-ամյա տարեդարձի կապակցությամբ: Մեր նորանկախ երկրի և հարկապես նրա երիտասարդության համար համալսարանը եղավ նոր սկիզբ: Ժողովրդավարության արևմտյան չափանիշների, շուկայական փրկության, ուսուցման արդիական սկզբունքների և ընդհանրապես նոր մտայնություն սերմանելու առումով համալսարանը եղավ առաջին նմանօրինակ կրթօջախը ո՛չ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում:

Հայաստանի ամերիկյան համալսարանը նաև ամերիկյան հասարակությունների, ամերիկահայ համայնքի և Հայաստանի

իշխանությունների արդյունավետ համագործակցության հրաշալի օրինակ է: Նրա փաստանյա շնորհակալ գործունեությունը լավագույնս վկայում է համարել ջանքերով լուրջ արդյունքների հասնելու նոր հնարավորությունների և չսպառված մեծ ներուժի մասին:

Անցած փաստանյակի ընթացքում համալսարանը գնահատելի ջանասիրությամբ ընդլայնել ու զարգացրել է իր ծրագրերը Հայաստանի զարգացմանը և նորացող պահանջներին համաքայլ: Պատահական չէ, որ նրա բազմաթիվ շրջանավարտներ այսօր ընդգրկված են և՛ պետական ծառայության մեջ, և՛ միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում, և՛ փնտեսության ու կրթության ամենափարբեր ոլորտներում:

Երախտագիտության խոսք հղելով բոլոր նրանց, ովքեր կանգնած են Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման ակունքներում և ովքեր արժանի շարունակողներն են կարևոր գործի՝ մաղթում եմ անձնական երջանկություն և աշխարհաքային նորանոր հաջողություններ:

ՌՈՒԲԵՐՏ ՔՈՂԱՐՅԱՆ

ՍՄՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՍ Ս. ԷՅՄՒԵՄԸ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

6 հուլիսի, 2001թ.

ԽՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում Հայաստանի ամերիկյան համալսարանի փնօրինությանը, դասախոսական կազմին, բարերարներին և նախկին ու ներկա բոլոր սաներին՝ կրթօջախի հիմնադրման փաստանյա հոբելյանի առիթով:

Արդարեւ, աստվածահաճո առաքելություն է կրթության և գիտության լույսի փարածումը: Հնագույն ժամանակներից ի վեր մեր ժողովուրդը կարևորել է կրթության և ուսման դերակատարությունը ազգային մեր կյանքում վաղ միջնադարում արդեն ձեւավորելով առաջին համալսարանները: Պատահական չէ, որ 5-րդ դարում հայոց գրերի գյուրից հետո հայերենով թարգմանված առաջին նախադասությունը եղավ Առակաց գրքի «ճանաչել զիմաստութիւն և զխրապ, իմանալ զբանս հանճարոյ» միտքը: Քաղաքական ամենադժվարին վիճակներում անգամ մեր ժողովուրդը նախանձախնդրորեն պահել է իր դպրոցները, գորացրել իմացության լույսը:

Հայաստանի ամերիկյան համալսարանը հիմնադրվեց հայրենի մեր երկրի համար շրջափակման և պատերազմական ծանր ժամանակներում՝ նպատակ հեռապնդելով պատրաստել երիտասարդ գիտնական մասնագետներ նորանկախ Հայաստանի փնօրեսական կյանքի գորացման և զարգացման համար: Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ամերիկյան համալսարանի շրջանավարտ մասնագետները արդյունավետորեն ծառայելով փոքրեր հաստատություններում, իրենց ներդրումն են բերում Հայաստանի փնօրեսության զարգացմանն ու կյանքի առաջընթացին: Հայաստանի ամերիկյան համալսարանի՝ մեր ժողովրդին մատուցած բարի արդյունքներից անմասն չէ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի գործունեության մեջ ներգրավված են համալսարանի շրջանավարտներ:

Աղոթում ենք ի սրբե, որ Բարձրեալն Աստված հանապազօգնական ու աջակից լինի Հայաստանի ամերիկյան համալսարանի փնօրինությանը, դասախոսական կազմին, համալսարանի գործունեությանը ստարտող Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, բարեգործ հայորդիներին և բոլոր ուսանողներին՝ նախանձախնդրորեն շարունակելու համալսարանի առաքելությունը Հայաստանի կյանքում:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



www.aua.am

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ	4
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ	5
ՀԵՏԱՉՈՏԵԼՈՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	9
ՀԻՄՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ	10
ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՈԳԱՐԱՉՈՒ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԸ	11
ՓՈՒՏԱԿՆԵՐԻՅ ՀԱՌՆՈՎ ՀԱՄԱՍԱՐԱՆԸ	12
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ	13
ԺԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	14-15
ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ	16-23
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ	16
ՈՐԱԿ	17
ՁԵՆՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ	19
ՏԵՆՆՈՒՄԳԻՆԵՐ	21
ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ	24-37
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	24
ՃԱՐՏԱՐԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ	26
ՔՎԳԱՔՎԻՏՈՒԹՅՈՒՆ	28
ՀԱՐԱՅԵՆ ԱՌՈՂՋԱՊԿՈՒԹՅՈՒՆ	30
ԻՆՎԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ	32
ԱՆՎԵՐՆ	34
ՀԱՏՈՒԿ ԳԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ	35
ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՂՆՈՒԹՅՈՒՆ	36
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐՈՒՆՆԵՐԸ	37
ԳՐԱԳՐԱՆԸ	38
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՆԸ	39
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ	40
ԱՅՈՒ ՄԻՉՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	41
ՇՐՋԱՆԱՎԱՔՏՆԵՐԸ	42-51
ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ	52
ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ	53

ՀՀ-ը առաջարկում է մագիստրոսի կոչում շնորհող ծրագրեր, որոնք կոչված են խորացված դասընթացների, ազատ ուսման և ԵՄ-ում ուսուցողական աշխատանքի միջոցով զարգացնելու քննադատական վերլուծություն և խոր գիտելիքներ: Իր ուսումնական ծրագրերը առաջարկելով անգլերենով ՀՀ-ը ձգտում է դրանք մատչելի դարձնել տարածաշրջանի այլ երկրների երիտասարդությանը: Ներկայումս ՀՀ-ը առաջարկում է մագիստրոսի կոչում շնորհող հետևյալ ուսումնական ծրագրերը.

- Գործարարություն և կառավարում
- Լեդյունաբերական ճարտարագիտություն և համակարգչային կառավարում
- Համակարգչի և տեղեկության գիտություն
- Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ
- Հանրային առողջապահություն
- Իրավագիտություն և համեմատական իրավունքի ուսումնաբերություն
- Մեզերենի ուսուցումը՝ որպես օտար լեզու

Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները մագիստրոսի կոչման դասընթացներին զուգընթաց կարող են մասնակցել շրջակա միջախորհրդակցական և ԵՄ-ում ուսուցողությունների վկայագիր շնորհող միջճշտային ծրագրին: Ուսանողներին հիմնական ուսումնական ծրագրերին նախապատրաստելու ընթացքում ՀՀ-ը կազմակերպում է անգլերեն լեզվի, ինչպես նաև համակարգչային դասընթացներ:

ՀԵՏԱԶՈՏԵԼՈՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ

Ավելի բան տալը տարի առաջ այս ուսումնական հաստատության հիմնադիրները հետազոտեցին Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխման այլընտրանքային հնարավորությունները և հանգեցին ամերիկյան նախատիպին: Անցած տասնամյակում ձևավորված համալսարանը զարգացավ՝ դեկլարվելով այդ նախատիպին բնորոշ լավագույն հատկանիշներով: Միաժամանակ, որպես ուսումնական հաստատություն, համալսարանի առաքելությունն է լինել այնքան հայկական, որքան Հայաստանի նյուս բարձրագույն կրթական հաստատությունները:

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) ներկայացրեց մի այլընտրանքային նախատիպ կամ ընտրության հնարավորություն, որը նպատակ էր հետապնդում խթանել ժողովրդավարական գործընթացը հաստատություններում և կառավարման համակարգում: Ընտրության հնարավորությունը առկա է նաև այն այլընտրանքային համակարգերում, որոնք ՀԱՀ-ը մատչելի է դարձրել իր ծառայություններից օգտվողների համար: Այդուհանդերձ, համալսարանի ամենակարևոր ներդրումը իր յուրաքանչյուր ծրագրում ճիշտ **ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ** կատարելու մեթոդների ուսուցումն է:

ՀԱՀ-ը ձգտում է հասնել բարձրագույն որակի կրթության: Որակյալ կրթություն ապահովելու մեր հոգածությունը ավելին է, բան հավատարմագրման գործընթացում հաջողելը: **ՈՐԿԵՆ** հոգածություն. ահա թե ինչը պետք է բնորոշ լինի այս ուսումնական հաստատությանը իր զարգացման յուրաքանչյուր փուլում: Համալսարանը կոչված է լինելու մասնագիտական բոլոր ոլորտների մեջ որակի ապահովման խրախուսողների և զարգացնողների առաջին գծում:

Անցման շրջանում կարիք ունենք նոր գաղափարներ և կատարելագործված համակարգեր առաջարկող փոփոխության կրողների: **ՊՈՐՏՈՒՄՆԵՐ**, ահա, թե ինչով կցանկանար խորհրդանշվել ՀԱՀ-ը: Ձեռներեցների դերը դեկլարված լինելուց ավելին է: Որանք ապագայի կերտողներն են, և մենք ակնկալում ենք, որ մեր ծրագրերը գործարարներ պատրաստեն ինչպես այսօրվա, այնպես էլ ապագայի համար:


Կրթական և ծրագրային ոլորտներում գործադրված ջանքերի անաչխաղացմանը զուգահեռ մենք ներսնուծում ենք նաև նոր **ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ** բոլոր այն ոլորտներում, որտեղ ընդգրկված է ՀԱՀ-ը: Տեխնոլոգիաները մեզ թույլ կտան գտնել շատ հարցերի յուժման բանալին տնտեսության տարրեր ճյուղերում: Այդուհանդերձ, տեխնոլոգիաների մեջ մեր ընդգրկվածությունը, հուսով ենք, կունենա ուժեղ սոցիալական կողմնորոշում: Նոր տեխնոլոգիաների յուրացման ընթացքում մենք պետք է հաշվի առնենք նաև մեր շրջակա միջավայրի և սոցիալական կերտվածքի պահպանման կարևորությունը:




Յ. Շիրյեբ

ՅԼՈՒԹՅՈՒՆ Գ. ԱՐՄԵՆԵՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ



«ԱՀ»-ի հիմնադրման վերաբերյալ Հայաստանի կառավարության որոշումը



«ԱՀ»-ի և Կալիֆորնիայի համալսարանի միջև կնքված համագործակցության համաձայնագիրը

ՄԱՐԿԵՏԻՆԳ

«ԱՀ»-ի ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԻՐ ԽՈՐՀՈՒՐԳ

ԴԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Հիշվում է պատվավոր նախագահ, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Երկրաչափական և Արտադրատնտեսական պատվավոր պրոֆեսոր

ՔԱՐՏԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ

ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության նախկին նախարար

ԴԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Կալիֆորնիայի համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ

ՔԱՐՏԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ Առևտրական հաստատարի նախագահ և ՀՀ նախկին փոխնախագահ

ԴԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության նախկին նախարար

ԼՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ ՍԻՍՏԵՄ
 Հայ բարեգործական ընդհանուր փնտրյալ նախագահ

ՉՈՒՆ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 Կալիֆորնիայի համալսարանի Արտասահմանյան կրթական ծրագրի տնօրեն

ՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 Կալիֆորնիայի համալսարանի (Քեմբրիջ) ֆիզիկայի պատվավոր պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով պատվավոր ավագ փոխնախագահ

«ԱՀ» ԿՈՐՄԻՏԵՆԻ ՀԻՄՆԱԿԻՐ ԽՈՐՀՈՒՐԳ

ՄԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ պատվավոր նախագահ, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Երկրաչափական և Արտադրատնտեսական պատվավոր պրոֆեսոր

ԼՈՒՆՑԱ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Բնատնի Բայետալին և պառ երաժշտության նվագախմբի կարգավորիչ

ՀՐԱՊԵՏԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ-ի նախագահ, Ջննա Հովիկին համալսարանի Բյուրեղեղ համալսարանի առողջապահության բաժնի պրոֆեսոր

ՀՐԱՊԵՏԱՆ
 Գեոլոգ (պաշտոնատեր), Կովկասյան տարածաշրջանի ուսումնական ծրագրի ղեկավար, ԱՄՆ պետական ղեկավարության տնօրենի ծառայությունների ինտերնոտ

ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Կալիֆորնիայի համալսարանի (Սանթա Կրուզ) Հասարակագիտական գիտությունների ֆակուլտետի ղեկավար

ՔԱՐՏԱՆ
 Արտադրատնտեսական կազմակերպության ղեկավար (Կալիֆորնիա, Կոլորադո)

ՄԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Կալիֆորնիայի համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ

ԼՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ ՍԻՍՏԵՄ
 Հայ բարեգործական ընդհանուր փնտրյալ նախագահ

ՉՈՒՆ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 Կալիֆորնիայի համալսարանի Արտասահմանյան կրթական ծրագրի տնօրեն, կառավարման պրոֆեսոր և Կալիֆորնիայի համալսարանի (Սանթա Կրուզ) ուսումնական գծով նախկին պրոֆեսոր

ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Հարապալատ, Լուս Անջելես, Կալիֆորնիա

ԿԱՐՏԱՆ
 Կալիֆորնիայի համալսարանի (Սանթա Կրուզ) նախկին ղեկավար, Կալիֆորնիայի համալսարանի (Քեմբրիջ) նախկին ղեկավար, Հարապալատի ղեկավար պատվավոր պրոֆեսոր

ԼՈՒՆՑԱ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Կալիֆորնիայի համալսարանի (Իրվայն) կառավարման բարձրագույն դպրոցի պատվավոր պրոֆեսոր

ՔԱՐՏԱՆ
 Ուղիղ և իսկապես նախագահ գրասենյակների գործակալ (Կոլորադո)

ՍԻՍՏԵՄ
 «Գեո» կազմակերպության նախագահ

ՄԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Սինանյան Առևտրական ընկերություն

ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ Հարապալատի ղեկավար, քաղաքագիտական Հարապալատի պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի (Քեմբրիջ) քաղաքագիտական Հարապալատի պրոֆեսոր

Ս. ՉԱՊԵՏԱՆ
 ՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ղեկավար և ավագ փոխնախագահ

ՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 Կալիֆորնիայի համալսարանի (Քեմբրիջ) ֆիզիկայի պատվավոր պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով պատվավոր փոխնախագահ

«ԱՀ» ԿՈՐՄԻՏԵՆԻ ՀԻՄՆԱԿԻՐ ԽՈՐՀՈՒՐԳ

ՄԻՐՎԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Հայաստանի ամերիկյան համալսարանի պատվավոր նախագահ, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Երկրաչափական և Արտադրատնտեսական պատվավոր պրոֆեսոր

ՀՐԱՊԵՏԱՆ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 ՀՀ-ի նախագահ, Ջննա Հովիկին համալսարանի Բյուրեղեղ համալսարանի առողջապահության բաժնի պրոֆեսոր

ԼՈՒՆՑԱ ԱՎՈՒՅՑՆԵՐ
 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար

ԼՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ ՍԻՍՏԵՄ
 Հայ բարեգործական ընդհանուր փնտրյալ նախագահ

ՉՈՒՆ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 ՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ղեկավար և ավագ փոխնախագահ

ՈՒՆՑԱ ՄԱՐԿԵՏԻՆԳ
 Կալիֆորնիայի համալսարանի (Քեմբրիջ) ֆիզիկայի պատվավոր պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով պատվավոր փոխնախագահ

ՓԼԱՏԱԿՆԵՐԻՑ ՀԱՌՆՈՂ ՀԱՄԱՎՄԱՐԱՆԸ

Որպես երկրաշարժագետ ճարտարագետ՝ 1978 թվականին Հայաստան կառավարման առաջին աստիճանի վեր ես կապ էի պահում հայաստանյան իմ գործընկերների հետ: Ես վերադարձա Հայաստան 1988 թվականի երկրաշարժից տասներկու օր անց: Սկսեցի աշխատել վերակառուցման և երկրաշարժակայուն ապահովության ծրագրերի վրա, սակայն իմ գործընկերոջ՝ Կալիֆորնիայի (Քերկլի) համալսարանի պրոֆեսոր Արմեն Տեր-Կոուրեղյանի հետ ունեցած մեր գրույցը արմատապես փոխեց իմ դիրքորոշումը: Արմենը միակ ամերիկացիս էր ԱՄՆ գիտական խմբում: Նա հարցրեց ինձ, թե արդյոք կաշխատեի՞ իր հետ՝ հիմնելու մի համալսարան, որը կփոխարիներ Գյումրիի հիմնահատակ ավերված ճարտարագիտական ինստիտուտին: Արմենի բարձրացրած հարցը մեզ տարավ Հայաստանում ամերիկյան նախատիպով մի համալսարան հիմնադրելու գաղափարին: Ավելի ուշ նա հաղորդեց նաև Երևանի ճարտարագիտական ինստիտուտի ռեկտոր Ֆուրի Սարգսյանի կարծիքը, որ ապագա համալսարանը պետք է ստեղծվի ամերիկյան համալսարանական նախատիպով:

Միացյալ Նահանգներում խորհրդակցեցինք բազում մարդկանց հետ: Եվ, վերջապես, երկու անձանց պատասխանները մեզ բերեցին այն համոզման, որ Հայաստանում ամերիկյան համալսարան հիմնելու մեր երազանքը կարող էր դառնալ իրականություն: Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ Լուիզ Մինն Մանուկյանը արձագանքեց՝ խոստանալով, որ ՀԲԸՄ-ը կհովանավորի այդպիսի մի հաստատություն: Կալիֆորնիայի համալսարան համա-

կարգի ուսումնական հարցերով ազգայնախազահ և պրոռեկտոր, դոկտոր Ուիլյամ Ֆրեյզերը համաձայնեց ուսումնասիրել վարչական և ակադեմիական ղեկավարություն ապահովելու հնարավորությունը:


Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) հիմնադրման նախագիծը բայլ առ բայլ գարգանում էր թե՛ ԱՄՆ-ում, և թե՛ Հայաստանում: Կալիֆորնիայի համալսարանի (Ռիվերսայդում) գործարար կառավարման ֆակուլտետի ղեկան պրոֆեսոր Ստեփան Կարամարյանը միացավ մեզ՝ առաջարկելով ընդարձակել ծրագիրը և ընդգրկել նաև գործարար կառավարման բաժինը: Դոկտոր Ֆրեյզերի և իր գործընկերների հետ համատեղ կազմվեց նոր համալսարան հիմնադրելու մեր երկարաժամկետ ծրագիրը:

Մեր ջանքերի արդյունքը եղավ նախ և առաջ Հայաստանի կառավարության որոշումը՝ համալսարանի հիմնադրման մասին, և հետո՝ Կալիֆորնիայի համալսարանի հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշումը՝ ՀԱՀ-ը որպես Կալիֆորնիայի համալսարանի համագործակց հաստատելու մասին:

Կազմվեց տնօրենների միացյալ խորհուրդ, որտեղ ՀԱՀ-ի նախագահ Միհրան Լեղաբաշյանը ներկայացնում էր ԱՄՆ իր գործընկերներին, իսկ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության նախարար Վիլիկ Հարությունյանը՝ Հայաստանի Հանրապետությունը: Խորհրդի կազմում ընդգրկված էին նաև ՀՀ կառավարության, Կալիֆորնիայի համալսարանի և ՀԲԸՄ այլ ներկայացուցիչներ:

Դասերը սկսվեցին 1991 թ. սեպտեմբերի 23-ին: Սա այն օրն էր, երբ Հայաստանի Ազգային ժողովը երկու օր առաջ կայացած համաժողովով դական հանրաքվեի արդյունքներով հռչակեց Հայաստանի անկախությունը: Համալսարանի առաջին ավարտական հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1993 թ. հոկտեմբերին:

Հայաստանում գործող կրթական համակարգում ՀԱՀ-ը դարձել է մի առողջ, այլընտրանքային տարրերակ: Այն օգնում է Հայաստանին՝ գտնելու իր օրինական տեղը համաշխարհային հանրության մեջ:



Մ. Կոուրեղյան

Մ. Կոուրեղյան
Հայաստանի ամերիկյան համալսարանի
կառավարի նախագահ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉՆԵՐ ՀԱՀ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀՈՎՔԱՐԶՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ ԱՆՎԱՄՆԵՐԻՑ

Հայ բարեգործական ընդհանուր միությունը հպարտ է, որ հիմնադրման օրվանից օժանդակել է Հայաստանի ամերիկյան համալսարանին:


Համալսարանի հիմնադրման տասներորդ տարեդարձի առթիվ շնորհավորում ենք աշխատակազմին, ուսանողներին և բոլոր այն բարերարներին, որոնք իրենց ներդրումն են ունեցել համալսարանի ձեռք բերած նվաճումներում: Մենք հատկապես հպարտ ենք մեր շրջանավարտներով, որոնք Հայաստանում դարձել են ժամանակակից արհեստավարժ կադրերի ներկայացուցիչներ:

Լուիզ Մեռուպեան Մեռոս

Կալիֆորնիայի համալսարանի անունից շատ ուրախ ենք ուղղելու մեր շնորհավորանքներն ու լավագույն մտղթանքները ՀՀ-ին՝ իր հիմնադրման տասնամյա տարեդարձի առթիվ: Գոհ լինելով արդյունքներով՝ անչափ բարձր ենք գնահատում մեր համագործակցությունը ՀՀ-ի հետ: Համալսարանը մի գործուն ուժ է ժամանակակից Հայաստանում, որն արտագոյում է հայկական ավանդույթը, ինչպես նաև մեր ժամանակների պահանջներին համապատասխան կենսունակ տնտեսության կառուցման կարիքները:

Շնորհավորում ենք բոլոր նրանց, ովքեր համագործակցում են ՀՀ-ի հետ՝ իրենց շնորհակալ աշխատանքի համար:

Չաթսոն Քեյս



ՀՀԲԱ-ի նախագահ Լուիզ Մեռուպեան Կիսինգ իր ուղերձն է հղում ՀԱՀ-ի ուսանողներին ավարտական արարողության ժամանակ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի տասներորդ տարեդարձը մի առանձնահատուկ առիթ է ես հավատում եմ, որ այն մի հիմնաքար է, որն ուղեկցում է ՀՀ-ի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջև հարատևող համագործակցությունը: Կյս ուսումնական հաստատությունը խորհրդանշում է համագործակցության այն ոգին, որ բնորոշ է Հայաստանի և Միացյալ Նահանգների հարաբերություններին:

ՀՀ-ի առաքելությունը վերաճնված Հայաստանի Հանրապետության կարիքներին ծառայելն է, որը նա կատարում է մեծ եռանդով, համբերությամբ:

Աստիճանաբար ընդլայնվող և բարեխղճորեն հղացված ծրագիրը սկիզբ առավ՝ Հայաստանի կրթական և հեռանկարային զարգացման կարիքներին համապատասխան:

Ես ողջունում եմ ՀՀ-ի ուսանողներին, դասախոսներին և աշխատակազմին այս նշանակալիորեն հաջողակ առաջին տասնամյակի տարեդարձի առթիվ և մաղթում ամենայն հաջողություն՝ Հայաստանին ու տարածաշրջանին ծառայելու իրենց կանաչ ճանապարհին:

Հաբեթ Գեյտաբ

1988

Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ավերիչ հարված հասցրեց Հայաստանին՝ խլելով 25.000 մարդու կյանք և անօթևան թողնելով 500.000-ին:

1989

Երկրաշարժից հետո Կրկնուտքի մասնագետները եկան Հայաստան՝ կիսելու իրենց փորձառությունը: Նրանք հնարավորություն ունեցան շփվելու հայ մասնագետների և կրթության գործով զբաղվողների հետ:

Այս փորձի փոխանակման արդյունքում ծնվեց ամերիկյան համալսարանի ստեղծման գաղափարը, որը նախատեսում էր Հայաստանում ստեղծել կրթության և որակավորման բարձրագույն մի նոր նախատիպ:

1990

Հայ բարեգործական ընդհանուր միությունը հանձն առավ տրամադրել համալսարանի հիմնելու համար անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների գլխավոր մասնաբաժինը:

Կայիֆորնիայի համալսարանի կողմից կազմված աշխատանքային խումբն այցելեց Հայաստան՝ հետազոտելու այս նախաձեռնության մեջ իր մասնակցության հնարավորությունը:

Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը համաձայնեց ցուցաբերել նյութատեխնիկական աջակցություն:

1991

Հայաստանի ամերիկյան համալսարանը հիմնադրվեց Հայ բարեգործական ընդհանուր միության, Կայիֆորնիայի համալսարանի և ՀՀ կառավարության համագործակցության և աջակցության շնորհիվ:

Դասերը սկսվեցին սեպտեմբերի 23-ին՝ Անգլերեն լեզվի արագացված ուսուցման ծրագրում ընդգրկված 101 ուսանողների մասնակցությամբ:

1992

ՀՀ-ի ուսանողների առաջին խումբը սկսեց իր ընտրած մասնագիտական դասընթացները Գործարարություն և կառավարում, Արդյունաբերական ճարտարագիտություն և Երկրաշարժալայուն ճարտարագիտություն բաժիններում:

Ավելացան նոր բաժիններ և կենտրոններ, այդ թվում՝ Շրջակա միջավայրի պահպանման և հետազոտման կենտրոնը, Ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնը, Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդումը վկայագիր շնորհող ծրագիրը, Գործարարության և հետազոտությունների զարգացման կենտրոնը և Հատուկ դասընթացների ծրագիրը:

1993

Հոկտեմբեր ամսին տեղի ունեցավ առաջին ավարտական հանդեսը, որի ժամանակ ավարտական վկայականներ ստացան Գործարարություն և կառավարում բաժնի 38, Արդյունաբերական ճարտարագիտության 10 և Երկրաշարժալայուն ճարտարագիտության 5 շրջանավարտներ:

1994

Հիմնվեց Բաղաբազմություն և միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում շնորհող բաժինը:

1995

Համագործակցելով Ջոնս Հոպկինս համալսարանի Բյուսթերգ հանրային առողջապահության բաժնի հետ՝ իր գործունեությունն սկսեց անրային առողջապահության վկայագիր շնորհող ծրագիրը: Այս ծրագրին զուգահեռ սկսեց յործել Առողջապահական ծառայությունների հետազոտության և զարգացման կենտրոնը:

Հիմնվեց հասարակական ուսումնասիրությունների կենտրոնը՝ նպատակ ունենալով անցյալից կիրառական բաղաբաղանդության միջոցով անհատականություններ:

1996

Հիմնվեց Իրավագիտության մագիստրոսի շտաբի շնորհող ծրագիրը: Իր գործունեությունն սկսեց Իրավական հետազոտությունների կենտրոնը՝ որպես իրավագիտության բաժնի աղյուցագույն մաս:

Հանրային առողջապահության վկայագիր նորից ծրագրին ընդլայնվեց և դարձավ մագիստրոսի կոչում շնորհող ծրագիր:

1997

Սկսվեց անգլերենի՝ որպես օտար լեզվի լասավանդման, մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը:

1998

Արդյունաբերական շարտարագիտություն և համակարգերի կառավարում բաժնում առաջարկվեց «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» երկրորդ մասնագիտացումը:

1999

Դպրոցների և բոլեջների արևմտյան ատոցիացիան ՀԱՀ-ին շնորհեց հավատարմագրման թեկնածուի կարգավիճակ:

Այնուհետև ԱՄՆ կոնգրեսը առանձնացրեց 9.6 միլիոն դոլար՝ որպես ՀԱՀ-ի նվիրատու ֆոնդ:

Սկսվեց «Հայ մատենագիտության թվային գրադարան» ծրագիրը:

2000

Սկիզբ առավ մագիստրոսի կոչում շնորհող Համեմատական իրավական ուսումնաբերության ծրագիրը:

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ֆինանսական աջակցությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին 112 գործազուրկ ծրագրավորողների և այլ տեխնիկական մասնագետների համար:

2001

Համալսարանը տոնում է կրթական և գիտահետազոտական նվաճումների տասնամյակը:

«Հայ մատենագիտության թվային գրադարան» ծրագիրը պարզևառավելեց ՀՀ նախագահի հատուկ մրցանակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարված և 2000 թ. ավարտված լավագույն աշխատանքի համար:

Ավարտվեց ՀԱՀ-ի կենտրոնի կառուցման առաջին փուլը:

2002

Կսկսվի համակարգչի և տեղեկույթի գիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) բարձր է գնահատում ընտրության հնարավորությունը: Համալսարանի գաղափարը քննարկելիս հիմնադիրները դիտարկեցին մի շարք ուսումնական նախատիպեր, ուր շեշտը դրվում էր գործնականության և գիտական մեթոդի վրա: ՀԱՀ-ի կրթական համակարգը թույլ է տալիս ուսանողներին ընտրել ծրագրեր, ունենալ առաջին և երկրորդ ընտրության հնարավորություն, հիմնական և երկրորդ մասնագիտացում:


Հայաստանի աճող պահանջներին զուգընթաց ՀԱՀ-ը ուսանողներին առաջարկեց լրացուցիչ ընտրության հնարավորություններ: Ընդունված ուսանողները կարող են իրենց առաջնային հիմնական ծրագրին ավելացնել նաև Շրջակա միջավայրի պահպանման վկայագիր շնորհող ծրագիրը: Ծարտարագիտության բաժինը ավելացրեց մի նոր մագիստրոսի կոչում շնորհող ծրագիր՝ համակարգչի և տեղեկույթի գիտության բնագավառում:

Ընտրիվ համակարգչային կենտրոնի՝ ուսանողների, դասախոսական կազմի և հետազոտողների համար պատուհան բացվեց դեպի արտաքին աշխարհ: Ինտերնետային համակարգը ապահովեց միջոցները: Ուսանողները, հետազոտողները և հասարակությունը օգտվեցին բաց գրապահոցներից: Ընթերցողները կարողացան

անմիջականորեն ընտրել ինչ որ ցանկանում էին: Համակարգիչները հնարավոր դարձրին զրքերի, ամսագրերի, լազերային սկավառակների արագ ընտրությունը: Ինտերնետի միջոցով մատչելի դարձան հոդվածների լիարժեք տեքստեր: Փաստաբանների, դատավորների, գիտնականների և ընդհանրապես հանրության համար մատչելի դարձան համեմատական և միջազգային իրավագիտության վերաբերյալ տվյալների բազաներ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Կատարել ընտրություն, նշանակում էլ ուսումնասիրել պարճատները, հեղազուրկ իրագործելի լուծումները և գործել

ՀԱՀ-ի դասախոսները հիմնվեցին փոփոխության գաղափարի վրա, որը և նշանակում էր ընտրության հնարավորություն: Կատարել ընտրություն, նշանակում էր ուսումնասիրել պատճառները, հետազոտել իրագործելի լուծումները և գործել: Իրավագիտության բաժնի մասնագետները ջերմեանդրեն պնդեցին, որ տղնտեսական բարգավաճման հիմքը ռացիոնալ և արդար օրենքներն են: Զարգացիտության բաժինը կարևորեց ժողովրդավարական գործընթացը թե՛ քաղաքացիական հասարակության թե՛ տարբեր կառուցվածքների, և թե՛ կառավարական համակարգի առումով:



Ուսանողներն օգտագործում են գրադարանի էլեկտրոնային շտեմարանները

Հանրության լայն շրջանների առջև իր դերերը բացեց հատուկ դասընթացների ծրագիրը: Մարդիկ, ովքեր նախընտրեցին ՀԱՀ-ի ակադեմիական ծրագրերը կամ գործնական դասընթացները, կարող էին ընտրել երեկոյան դասընթացները: Այս ծրագիրը աշխատանքներ ծավալեց նաև Գյումրիում, Սպիտակում և Վանաձորում: Հրավիրված դասախոսները՝ դեսպաններ, նախարարներ, օտարերկրյա պաշտոնյաներ, մշակույթի գործիչներ, քաղաքական առաջնորդներ, գործարարներ և շատ ուրիշներ, ներկայացրեցին տեսակետների մի ամբողջ բազմազանություն: Ընթացիկ դասախոսությունները և հարցերը դրվում են ինտերնետում և մատչելի են բոլոր նրանց համար, ովքեր չեն կարող ներկա գտնվել (տե՛ս նաև էջ 35):

ՈՐԱԿ

Ունենալով սահմանափակ բնական հարստություններ, գտնվելով շրջափակման մեջ և հիմնվելով գերազանցապես տեղական մտավոր ներուժի վրա՝ Հայաստանը պետք է հարաբերական առավելություն ունենա մրցելու մի աշխարհում, ուր սահմանված չափանիշը գերազանց արտադրանքն է: Հայաստանը պետք է մրցունակ լինի համաշխարհային տնտեսության մեջ: Ներդրողները չեն գա Հայաստան առանց ներդրումների նկատմամբ եկամտի ակնկալիքի:

Մրցակցող աշխարհում սա նշանակում է որակ: Աշխարհի հետ համաբալլ ընթանալով՝ Հայաստանը կարող է մրցել միայն շուկայականից ցածր գնի շնորհիվ:

Հայաստանը չի կարող զարգանալ՝ առանց համաշխարհային որակի չափանիշները իր կառույցներում կիրառելու

Հայաստանը չի կարող զարգանալ՝ առանց համաշխարհային որակի չափանիշները իր կառույցներում կիրառելու: Եվրախորհուրդը և Եվրամիությունը կհետաքրքրվեն Հայաստանով միայն այն դեպքում, եթե այն որակ և գերազանցություն դրսևորի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտներում: Հայաստանը պետք է ապացուցի Սփյուռքի ներդրողներին, որ այն պատրաստ է մուտք գործել որակի աշխարհ:

ՀԱՀ-ը դարձավ ԱՄՆ-ից դուրս գտնվող առաջին անկախ համալսարանը, որ հավատարմագրման թեկնածուի կարգավիճակ ստացավ Դպրոցների և քոլեջների արևմտյան ասոցիացիայի (ՂԲԱԱ) կողմից (ՂԲԱԱ-ն Միացյալ Նահանգների արևմտյան մասի քոլեջների և համալսարանների հավատարմագրման պատասխանատուն է): Համաշխարհային չափանիշների կիրառումը ՀԱՀ-ում կնշանակի ուսանողներին, դասախոսներին, ներդրողներին և կրթական համակարգի ղեկավարներին հավասար

Պատիտներն ու աշխատակազմը ընտարվում են ՀԱՀ հավատարմագրման հետ կապված հարցեր




տիացնել, որ ՀԱՀ-ը ձգտում է մրցել լավագույնի հետ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ այլուր: Հրավիրվող դասախոսների ընդգրկումը ՀԱՀ-ին թույլ է տալիս ներգրավել լավագույն մասնագետների, որոնք հյուրընկալվում են համեմատաբար կարճ ակադեմիական ժամկետով և միաժամանակ շարունակում իրենց հետազոտական աշխատանքը Հայաստանից դուրս գտնվող իրենց հաստատություններում: Փորձառու դասախոսների այս ներգրավումը ՀԱՀ-ին հնարավորություն է տալիս առավել բարձրացնել դասավանդման և ուսման որակը: ՀԱՀ-ը կլինի Հայաստանում առաջին համալսարաններից մեկը, որ կանցնի ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվող հավատարմագրման գործընթացով:

ՀԱՀ-ի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը հրատարակման է պատրաստել պրոֆեսոր Ավետիս Տոնայետյանի՝ առողջապահության ոլորտում որակի ապահովման վերաբերյալ հիմնարար աշխատությունը (իայերեն և ռուսերեն թարգմանությամբ): Հանրային առողջապահության ծրագիրը աշխատակցում է Լորդ-Մարաշ բժշկական կենտրոնի սրտի վիրաբուժության ծառայության հետ՝ վերջինում բուժապասարկման կազմակերպման որակի միջազգային մակարդակի չափանիշներ հաստատելու ուղղությամբ: Ակնկալվում է, որ այս ջանքերը մարտահրավեր կնետնեն բուժապասարկման կազմա-

կերպման նախկին ձևերին և, հաջողության դեպքում, կընդորոշակվեն Հայաստանի այլ բուժաստատությունների կողմից և կդառնան հանրության ուշադրության առարկա:

Անզեղ են լեզվի ծրագրի բաժինը որակի հարցը իր առաջնային խնդիրն է համարում: Այժմ օգտագործում է բազմաբնույթ տեղեկատվական տեխնոլոգիաներ, ուսումնասիրում ուսանողների կարողությունները և պարբերաբար գնահատում նրանց գիտելիքները: «Անզեղ ենի» որպես օտար լեզվի դասավանդման, մագիստրոսի կոչում շնորհող՝ ծրագիրը ուսանողներին մեկ տարով ուղարկում է ԱՄՆ՝ լեզվագիտական վերապատրաստման: Վերադառնալով Հայաստան՝ այս ուսանողները շարունակում են ավարտել իրենց թեզը՝ ուսումնասիրելով ուսուցման այն մեթոդներն ու ձևերը, ինչպես նաև նորությունները, որոնք կարող են ներմուծվել ՀԱՀ և ներկայացվել Հայաստանում անզեղ են դասավանդող առավել լայն հանրությանը:

Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների բաժինը կարևորում է մագիստրոսի ավարտական թեզը և գործնական փորձառությունը՝ ուսանողներին հնարավորություն տալով առնչվելու քաղաքական աշխարհի իրական խնդիրներին: Ակնկալվում է, որ ձեռք բերվող փորձառությունը կլինի երկակի. ուսանողները կվերլուծեն քաղաքական հարցեր և կաջակցեն լուծելու Հայաստանում ծառայած հար-



Ուսանողները բարելավում են անզեղ ենի կրթությունը Ուսումնական համակարգչային կենտրոնում

տալ խնդիրները: Ուսանողների հրատարակություններից կարելի է նշել հայ փաստականների մասին ուսումնասիրությունը՝ «Դժվարությունները փախստականների ինտեգրացման և քաղաքացիության ձեռք բերման գործում» կամ Հայաստանի ֆինանսական պարտքի վերաբերյալ վերլուծությունը՝ «Հայաստանում տնտեսության զարգացման միտումները» թեմայով: Հասարակական հետազոտությունների կենտրոնը վերջերս հաջողությամբ ավարտեց Հայաստանի աղետի գոտում բնակարանային վկայագրեր ստացած անձանց շրջանում կատարած ուսումնասիրությունը, որի արդյունքները իմք ծառայեցին շարունակելու «Բնակարանների գնման վկայագիր-ծրագիրը»՝ ավելի մեծ թվով անտուն քաղաքացիների բնակարաններով ապահովելու համար: Կենտրոնը ներկայումս ուսումնասիրում է նաև Հայաստանում տեղական կառավարման մարմինների կառուցվածքը և գործունեությունը՝ մեթոդներ մշակելով կառավարման մարմինների գործունեության մեջ քաղաքացիներին առավել ընդգրկելու համար:


Գործարարության ջոկելը դրականորեն արձագանքեց ճեմարանի ուսանողների համար դառնալից ներկայացրած կազմակերպելու Մար Աթոռ Ա. Էջմիածնի ինդրանջին: Դասընթացը հանգամանորեն անդրադարձավ կառավարման, ֆինանսների, հաշվառման, աշխատանքի կազմակերպման և շուկայագիտության հարցերին: Ծե-

մարանի ուսանողներին հնարավորություն տրվեց ուսումնասիրել և վերլուծել աշխատանքների ռացիոնալ կազմակերպման հարցերը, որքանով որ դրանք առնչվում են եկեղեցական տնտեսության հետ: Դասընթացների նպատակն է օգնել երիտասարդ հոգևորականներին՝ ծանոթանալու տնտեսավարման արդի մեթոդներին:

ՉԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Գործարարության և կառավարման ջոկելի հավատամքն է ձեռներեցությունը: Այն շեշտը դնում է հանրահայտ ճշմարտության վրա, որ յուրաքանչյուր մարդ կարող է օրինական ճանապարհով դրամ վաստակել: Ջոկելը ուսումնասիրում է գործարարության սկզբունքները՝ ֆինանսներ, հաշվառում և շուկայագիտություն, հաշվի առնելով ներդրումների առումով և մանր ու միջին գործարարների առջև ծառայած խոչընդոտներն ու դժվարությունները: Ուսանողները հասկանում են ոչ մենաշուկային ձեռներեցության մեջ հաջողելու դժվարությունները: Նրանք ձգտում են լավատեսյակ լինել միջազգային հաշվապահական հաշվառման ժամանակակից չափանիշներին թե՛ իրենց, և թե՛ իրենց կազմակերպություններին, համաշխարհային մրցակցության պատրաստելու համար: Վարչա-հրամայական տնտեսության փոխակերպումը

ՀՊԿ-ում Երևանի շուկայի սեկտորների զարգացումը քննարկելիս



ազատ տնտեսության պահանջում է փորձագիտություն, ազնվություն, հաստատակամություն, նպատակաուղղվածություն և, հավանական է, մի փոքր էլ հաջողություն: ՀՊԿ-ի ուսանողները ներկայումս ուսումնասիրում են շուկաները, ֆինանսավորումը, գործի պլանավորումը, վաճառահանման հնարավորությունները և ներդրումները: Ավելին՝ նրանք հետազոտում են սպառողների կարիքներն ու ցանկությունները:

Սովորելով գործարար ղեկավարման ջոկելում կամ աշխատակցելով Փոլ Ավետիսյան նվիրատու հիմնադրամի կողմից ֆինանսավորվող գործարարության հետազոտման և զարգացման կենտրոնում՝ ուսանողները ձեռք են բերում գործնական գիտելիքներ և սովորում կիրառել դրանք: Գործնական փորձառությունը նպաստում է լսարանում ստացված գիտելիքի ամրապնդմանը և ուսանողի պատրաստած գործարար պլանները դարձնում ավելի իրական և կիրառելի: Անհատական նախագծերի արդյունքում կյանքի են կոչվել Լորաստեղծ նախագծեր, ինչպիսին է Հայ-Էֆ-ԷՆԸ՝ Երևանում:

Ներկայումս մի հրաշալի նախագիծ է սկսվել՝ ի դեմս «Ցափոնիկա» միջոցառման կենտրոնի: Այն կոչված է ուսումնասիրել և վերլուծել սոցիալական ձեռնարկությունների նրկատմամբ ձեռնարկատիրական մտեցումների կիրառումը: Բարեգործներին այսօր հետաքրքրում է սոցիալական ոլորտին հատկացված

օգնության արդյունքները: Զարլգ և Ազնես Դազարյանների հիմնադրամից ֆինանսավորվող այս նոր միջոցառման կենտրոնը նպատակ ունի հետազոտել և վերլուծել սոցիալական գործունեության ակնկալվող արդյունքները:

Սոցիալական գործունեության նկատմամբ ներդրման տիպային չափանիշների ներմուծումը նշանակալի գիտափորձ է Հայաստանում

Սոցիալական գործունեության նկատմամբ ներդրման տիպային չափանիշների ներմուծումը նշանակալի գիտափորձ է Հայաստանում Այս մտեցումները հաջողությամբ կիրառվում են Արևմուտքում և հատկապես ԱՄՆ-ում: Նկատի ունենալով հայկական Սփյուռքի ներուժը՝ մի շարք բարեգործական ծրագրեր կարող են Հայաստանին տալ այսպիսի պոտենցիալ առավելություն:

Առողջապահական գիտությունների ջոկելը իր գիտահետազոտական կենտրոնը, որընք ֆինանսավորվում են Չվարթ Ավետիսյան Օսանյան նվիրատու հիմնադրամի կողմից, արդեն հստակ քայլեր են ձեռնարկել նպատակային ֆոնդերի ներդրման ուղղությամբ՝ որոշակիորեն պատկերացնելով դրանցից սպասվող արդյունքները: Այդ ներդրումներից են՝ Կարո Մեղրիկյան անվան Կանխարգելիչ ակնաբուժության ինստի-



ՀՊԿ-ի շրջանավարտը ղեկավարում է էլեկտրա-թիվական գեներատորների արտադրությունը Երևանի «Սոլարեկ» ՓԲԸ-ում

տուտի հիմնադրումը և Լորթ-Մարաշ բժշկական կենտրոնի սրտի վիրաբուժական ծառայության հետ համագործակցության ծրագիրը: Առաջինը նպատակ ունի ուսումնասիրել տեսողական ախտաբանության և կուրության տարածվածությունն ու պատճառները, ճիշտ նպատակաուղղել առաջնային և երկրորդային կանխարգելմանն ուղղված ջանքերը: Երկրորդը եզակի մի լաբորատորիա է ուսանողների ուսուցման համար այնպիսի կլինիկական միջավայրում, որը փորձում է կիրառել Արևմուտքի բժշկական և գործարարական փորձը՝ միաժամանակ մշակելով և ներդնելով բուժօգնության որակի գնահատման և ապահովման համակարգեր:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Հայաստանի հարաբերական առավելությունը, թվում է, խորապես գտնվում է տեխնոլոգիաների ոլորտի զարգացման մեջ: Նա հետամուտ կլինի նվազագույնի հասցնել իր տնտեսական անբարենպաստ վիճակը՝ ուժեղացնելով իր տեխնոլոգիական կարողությունը համաշխարհային շուկայում:

Ի լրումն իր մշտական դասընթացների, ՀԱՀ-ը արձագանքեց գործազուրկ ծրագրավորողների և տեխնիկական մասնագետների որակավորման բարձրացման կարիքին՝ դասըն-

թացներ կազմակերպելով Հայաստանի այսօրվա շուկայում անհրաժեշտ ծրագրավորման (էզզուների վերաբերյալ: Ընդլայնելով իր տեխնիկական հնարավորությունները, ճարտարագիտության բաժինը սկսում է մագիստրոսի նոր կոչում շնորհող դասընթացների ծրագիր՝ համակարգչային և տեղեկայթի գիտության ապարեզում:

Այս ծրագիրը համալրում է նոր տեխնոլոգիաների արմատավորման ոլորտում ճարտարագիտական բաժնի գործունեությունը: Օգտագործելով համակարգչային, ինչպես նաև համակարգչի աջակցությամբ նախագծման և արտադրության լաբորատորիաները, երկրաշարժակային ճարտարագիտության սարքավորումները և արևի ճառագայթման դիտարկումային կայանը՝ ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնը նախագծում է արմատավորում է Հայաստանի արդյունաբերության համար նորարարական լուծումներ:

ՀԱՀ-ն օգտագործում է նորագույն տեխնոլոգիաներ բազմաբնույթ գիտահետազոտական կարիքների համար: Օրինակ՝ Շրջակա միջավայրի պահպանման և հետազոտության կենտրոնը (ՇՄԳԳԿ), վերջերս ձեռք է բերել փոխադրովի ռենտգենյան ճառագայթների ֆլուորեսցենտային սպեկտրոֆոտոմետր, որը օգտագործվել է Երևանում, Վանաձորում, Ալավերդիում և Սևանա լճում վերցրած հողի և

Սևանա լճի արտոտվածությունը գնահատվում է Բնության պահպանության և հետազոտական կենտրոնի աշխարհագրական տեղեկատվական համակարգի միջոցով



նստվածքների 1500 նմուշներում թունավոր մետաղներով վարակվածության աղբյուրները և տարածումը որոշելու համար: Թունավոր մետաղների վերլուծության աղբյուրները արտացոլվել են աշխարհագրական ինֆորմացիոն համակարգում, հատկապես ախտահարված հատվածները հստակ ցույց տալու համար: Այս հետազոտությունը լրացնում է Կալիֆորնիայի համալսարանի (Սանթա Կրուզ) հետ ընթացիկ համագործակցությունը, որի միջոցով ՇՄԳԳԿ-ն հնարավորություն ունի օգտվելու կատարյալ լաբորատորիաներից և վերլուծական հնարավորություններից՝ ներառյալ օդի մաքրության 100 կարգի (օդի բարձր մաքրության ցուցանիշ) լաբորատորիաները, ինդուկտիվորեն միակցված պլազմային մասսպեկտրոմետրը, ինչպես նաև թերմալ իոնացման մասսպեկտրոմետրը:

